

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

*Այովակիայի Հանրապետության կառավարության
& Հայաստանի Հանրապետության կառավարության
միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ
պաշտպանության մասին*

Այովակիայի Հանրապետության կառավարությունը
և
Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

(այսուհետ՝ «Կողմեր»),

Ծանաչելով քաղաքական, ռազմական, տնտեսական, իրավական, գիտական և տեխնոլոգիական կամ որևէ այլ համագործակցության շրջանակներում փոխադարձաբար փոխանակվող գաղտնի տեղեկատվության պաշտպանության իրավահարաբերությունների սահմանման անհրաժեշտությունը,

Մտադրվելով ապահովել մեկ կողմի պետությունում դրոշմագրված և մյուս կողմի պետությանը փոխանցված բոլոր տեսակների գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանությունը,

Ցանկանալով ստեղծել կողմերի միջև փոխանակվող գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության կանոնների ամրոցություն,

Հաշվի առնելով փոխադարձ շահերը գաղտնի տեղեկատվության պաշտպանության բնագավառում՝ կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան,

համաձայնեցին հետևյալի մասին.

Ֆոդված 1

Երաժույց

Սույն Համաձայնագրի նպատակն է ապահովել կողմերի պետությունների միջև փոխանակվող կամ նրանց համագործակցության շրջանակներում աստիճանող գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը:

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն են՝

ա) «Գաղտնի տեղեկատվություն» նշանակում է ցանկացած տեղեկատվություն կամ նյութ, որը, անկախ իր ձևից կամ բնույթից, պահանջում է շրջապատված մեքենայությունից պաշտպանություն և որը դրոշմագրվել է Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան,

բ) «Տրամադրող կողմ» նշանակում է այն Կողմի պետությունը, որը նյութ Կողմի պետությանը փոխանցում է Գաղտնի տեղեկատվություն,

գ) «Անազող կողմ» նշանակում է այն Կողմի պետությունը, որին նյութ Կողմի պետության կողմից փոխանցվում է Գաղտնի տեղեկատվություն,

դ) «Անվտանգության իրավաբան մարմին» նշանակում է սույն Համաձայնագրի կիրառման և վերահսկման համար պատասխանատու ազգային անվտանգության մարմին,

ե) «Կոմերսիալ» նշանակում է գաղտնի պայմանագրեր կնքելու իրավունակություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

զ) «Գաղտնի պայմանագիր» նշանակում է երկու կամ ավելի Կոմերսիալությունների միջև համաձայնություն, որը պարտնակում կամ ներառում է Գաղտնի տեղեկատվություն,

է) «Օբյեկտում կամ էփեմերալությունում գաղտնի աշխատանքի բուլջոփություն» նշանակում է Անվտանգության իրավաբան մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ իրավաբանական անձն ունի Գաղտնի տեղեկատվություն օգտագործելու և պահելու ֆիզիկական և կազմակերպչական հնարավորություններ՝ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն,

ը) «Անճնակազմի գաղտնի աշխատանքի բուլջոփություն» նշանակում է Անվտանգության իրավաբան մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, ֆիզիկական անձն իրավունք ունի ստանալ Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու բուլջոփություն,

թ) «Անհրաժեշտ է տեղյակ լինել» նշանակում է տվյալ ծառայողական դիրքի շրջանակներում և որոշակի խնդրի իրականացման համար Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու բուլջոփության անհրաժեշտություն,

ժ) «Երբորդ կողմ» նշանակում է սույն Համաձայնագրի կողմ չհամարվող ցանկացած պետություն, կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Գոյլած 3

Անվտանգության դրոշմագրման մակարդակներ

Կողմերը համաձայնում են, որ անվտանգության դրոշմագրման հետևյալ մակար-

դակնըրը համարժեք են և համապատասխանում են իրենց ազգային օրենսդրությանը հետակեցված անվտանգության դրոշմագրման մակարդակներին՝

Սլովակիայի Հանրապետության համար	Հայաստանի Հանրապետության համար	Համարժեքն անգլերենով
PRISNE TAJNÉ	Հույժ գաղտնի	TOP SECRET
TAJNÉ	Գաղտնի	SECRET
DŮVERNĚ	ԳԱՂՏՆԻ	CONFIDENTIAL

Հայաստանի Հանրապետության կառավարությունը RESTRICTED - VYHRADENÉ (Միայն ծառայողական օգտագործման համար) դրոշմագրի համար կապահովի նույն պաշտպանությունը, որը նախատեսված է ԳԱՂՏՆԻ/DŮVERNĚ/CONFIDENTIAL դրոշմագրի համար:

Գորված 4

Անվտանգության իրավասու մարմիններ

1. Կողմերի Անվտանգության իրավասու մարմիններն են՝

Սլովակիայի Հանրապետության համար՝

Ազգային անվտանգության մարմին

Բուդայտինսկա 30

Բրատիսլավա 850 07

Սլովակիայի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետության համար՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

Նալբանդյան 104

Երևան 0001

Հայաստանի Հանրապետություն

2. Կողմերը դիվանագիտական ուղիներով կտեղեկացնեն միմյանց Անվտանգության իրավասու մարմինների կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:

3. Հարցման դեպքում, Անվտանգության իրավասու մարմինները միմյանց կտեղեկացնեն Գաղտնի տեղեկատվության մասին համապատասխան ազգային օրենսդրության վերաբերյալ և կփոխանակեն տեղեկատվություն Գաղտնի տեղեկատվության պաշտպանությանն առնչվող անվտանգության չափանիշների, ընթացակարգերի և գործնական հարցերի մասին:

**Պաշտպանական միջոցառումներ
և գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվություն**

1. Իրենց ազգային օրենսդրության համաձայն՝ Կողմերի պետությունները կենտրոնանալեն թուր պատշաճ միջոցները սույն Համաձայնագրի ներքո փոխանակվող կամ առաջացող գաղտնի տեղեկատվության պաշտպանության համար: Ենթան գաղտնի տեղեկատվությանը կտրվի պաշտպանության նույն մակարդակը, որը նախատեսված է 3-րդ հոդվածի համաձայն անվտանգության դրոշմագրման համարժեք մակարդակի Գաղտնի տեղեկատվության համար:

2. Տրամադրող Կողմը գրավոր կերպով կտեղեկացնի Ստացող Կողմին փոխանցված գաղտնի տեղեկատվության անվտանգության դրոշմագրման մակարդակի ցանկացած փոփոխության մասին:

3. Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվությունը, «Անհրաժեշտ է տեղյակ լինել» սկզբունքի համաձայն, կտանձանափակվի այն անձանցով, որոնց թույլատրված է, ազգային օրենսդրությանը համապատասխան օգտվել անվտանգության դրոշմագրման համարժեք մակարդակի Գաղտնի տեղեկատվությունից:

4. Յուրաքանչյուր Կողմի պետություն կճանաչի մյուս Կողմի պետության ազգային օրենսդրության համաձայն շնորհված Անձնակազմի և Օրչելտում կամ հիմնարկությունում գաղտնի աշխատանքի թույլտվությունները, որոնք պետք է համարժեք լինեն՝ 3-րդ հոդվածին համապատասխան:

5. Անվտանգության իրավասու մարմինները, իրենց պետության ազգային օրենսդրությանը համապատասխան, միմյանց կաշակցեն, հարցման դեպքում, սույն Համաձայնագրի կիրառման համար անհրաժեշտ հուսալիության ստուգման ընթացակարգերի իրականացման հարցում:

6. Անվտանգության իրավասու մարմինները, ստանց հազարդման, միմյանց կտեղեկացնեն Անձնակազմի և Օրչելտում կամ հիմնարկությունում գաղտնի աշխատանքի թույլտվություններին տանվող ցանկացած փոփոխության մասին, մասնավորապես, որանց դադարեցման կամ անվտանգության դրոշմագրման մակարդակի իջեցման մասին:

7. Ստացող կողմը պետք է՝

ա) Գաղտնի տեղեկատվություն տրամադրի որևէ երբորդ կողմին, միայն Տրամադրող կողմի նախնական գրավոր համաձայնության ակալության դեպքում:

բ) դրոշմագրի ստացված Գաղտնի տեղեկատվությունը՝ 3-րդ հոդվածին համապատասխան.

գ) օգտագործի Գաղտնի տեղեկատվությունը միայն այն նպատակներով, որոնց համար այն տրամադրվել է:

Հոդված 6

Գաղտնի տեղեկատվության փոխանցում

1. Գաղտնի տեղեկատվությունը կփոխանցվի դիվանագիտական ուղիներով, եթե այլ պայմանավորվածություն չկա Անվտանգության իրավասու մարմինների միջև: Ստացող կողմը գրավոր կհաստատի Գաղտնի տեղեկատվությունը ստանալու մասին:

2. Գաղտնի տեղեկատվության էլեկտրոնային փոխանցումը կկատարվի Անվտանգության իրավասու մարմինների կողմից հաստատված գաղտնագրման միջոցներով:

Հոդված 7

Գաղտնի տեղեկատվության վերաբրտադրում և թարգմանում

1. Գաղտնի տեղեկատվության վերաբրտադրումներն ու թարգմանությունները կկատարվեն Ստացող կողմի պետության ազգային օրենսդրության և հետևյալ ընթացակարգերի համաձայն.

ա) անհատները պետք է ունենան Անձնակազմի գաղտնի աշխատանքի թույլտվություն՝ իրենց պետության ազգային օրենսդրության համաձայն,

բ) թարգմանություններն ու վերաբրտադրումները պետք է մակագրված լինեն և պահպանվեն ինչպես Գաղտնի տեղեկատվության քնտրմանը,

գ) թարգմանությունները և պատճենների քանակը չպետք է գերազանցեն պաշտոնական նպատակների համար պահանջվող քանակը,

դ) թարգմանությունները պետք է թարգմանության լեզվով գրություն պարունակեն, որը ցույց կտա, որ դրանք՝ Տրամադրող կողմից ստացված Գաղտնի տեղեկատվություն են պարունակում:

2. ՀՈՒԹԺ ԳԱՂՏՆԻՎ ՏԱՅՆԷ / SECRET դրոշմագրին համարժեք կամ անվտանգության դրոշմագրի առավել բարձր մակարդակի գաղտնագրված տեղեկատվությունը կթարգմանվի կամ կվերաբրտադրվի միայն Տրամադրող կողմի նախնական գրավոր համաձայնությամբ:

Գողյած 8

Գաղտնի տեղեկատվության ոչնչացում

1. Գաղտնի տեղեկատվությունը պետք է ոչնչացվի դրա մասնակի կամ ամբողջական փոփոխումը կամխելու համար:

2. ԳԱՂՏՆԻ/ D'OVERNE/ CONFIDENTIA դրոշմագրին համարժեք գաղտնագրված տեղեկատվությունը պետք է ոչնչացվի՝ Ստացող կողմի ազգային օրենսդրության համաձայն:

3. ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ/ TAJNÉ / SECRET դրոշմագրին համարժեք գաղտնագրված տեղեկատվությունը չպետք է ոչնչացվի: Այն պետք է վերադարձվի Տրամադրող կողմի Անվտանգության իրավասու մարմնին:

4. Գաղտնի տեղեկատվության ոչնչացման վերաբերյալ զեկուցագիր կկազմվի և դրա անգլերեն բարձրմանությունը կփոխանցվի Տրամադրող կողմի Անվտանգության իրավասու մարմնին:

Գողյած 9

Գաղտնի պայմանագրեր

1. Մի կողմի պետությունը, որը ցանկանում է Գաղտնի պայմանագիր կնքել մյուս կողմի պետության Կոնտրակտորի հետ, կամ ցանկանում է լիազորել իր Կոնտրակտորներից մեկին գաղտնի մախագծի ներքո Գաղտնի պայմանագիր կնքել մյուս կողմի պետության տարածքում, պետք է, իր Անվտանգության իրավասու մարմնի միջոցով, նախապես գրավոր հավաստագիր ստանա մյուս կողմի պետության Անվտանգության իրավասու մարմնից այն մասին, որ առաջարկված Կոնտրակտորն ունի Օրչեկտում կամ հիմնարկությունում գաղտնի աշխատանքի բուլլետություն:

2. Սույն Համաձայնագրի ներքո կնքված յուրաքանչյուր Գաղտնի պայմանագիր պետք է ներառի հետևյալը.

ա) Կոնտրակտորի պարտավորությունը՝ երաշխավորելու, որ վերջինիս շինություններն անհրաժեշտ պայմաններ ունեն անվտանգության դրոշմագրման համապատասխան մակարդակի Գաղտնի տեղեկատվության հետ աշխատելու և պահելու համար,

բ) Կոնտրակտորի պարտավորությունը՝ երաշխավորելու, որ Գաղտնի տեղեկատվության բուլլետություն պահանջող պաշտակալություններ իրականացնող անձինք ունեն Անճնակազմի գաղտնի աշխատանքի բուլլետություն,

գ) Կոնտրակտորի պարտավորությունը՝ երաշխավորելու, որ Գաղտնի տեղեկա-

տվության մասին բուլլետյունում ունեցող բոլոր անձինք տեղեկացված են ազգային օրենսդրության համաձայն գաղտնի տեղեկատվության պահպանության նկատմամբ իրենց պարտավորությունների մասին.

դ) Կոնտրակտորի պարտավորությունը՝ իրականացնելու իր շինությունների անվտանգության պարբերական ստուգումներ.

ե) Գաղտնի տեղեկատվության ցուցակ, ինչպես նաև այն բնագավառների ցուցակ, որտեղ Գաղտնի տեղեկատվությունը կարող է ի հայտ գալ.

զ) Գաղտնի տեղեկատվության անվտանգության դրոշմագրման մակարդակի ցանկացած փոփոխության մասին հաղորդակցման ընթացակարգ.

է) կապի միջոցների և փոխանցման էլեկտրոնային միջոցների ցուցակ.

ը) Գաղտնի տեղեկատվության տեղափոխման ընթացակարգ.

թ) Գաղտնի պայմանագրի հետ կապված Գաղտնի տեղեկատվության պահպանության համար պատասխանատու համարապատասխան լիազորված անհատների կամ իրավաբանական անձանց ցուցակ.

ժ) Կոնտրակտորի պարտավորությունը՝ ծանուցելու գաղտնի տեղեկատվության օրէ՛լ իրական կամ կասկածելի կորստի, արտահոսքի կամ չլիազորված գաղտնագրիծման մասին.

ի) Կոնտրակտորի պարտավորությունը՝ փոխանցելու իր Անվտանգության իրավասու մարմնին Գաղտնի պայմանագրի օրինակը:

3. Կողմերից մեկի պետության տարածքում Կոնտրակտորի և մյուս Կողմի պետության տարածքում տեղակայված մեկ այլ Կոնտրակտորի միջև նախապայմանագրային բանակցությունները սկսելուն պես՝ ուղղված Գաղտնի պայմանագրի ստորագրմանը, Անվտանգության իրավասու մարմինը կտեղեկացնի մյուս Կողմի պետությանն այլ նախապայմանագրային բանակցություններին առնչվող Գաղտնի տեղեկատվությանը տրված անվտանգության դրոշմագրի մակարդակի վերաբերյալ:

4. Անվտանգության իրավասու մարմնների ներկայացուցիչները կարող են այցելել միմյանց՝ Գաղտնի պայմանագրում ներառված Գաղտնի տեղեկատվության պահպանության համար Կոնտրակտորի կողմից ընդունված միջոցների արդյունավետությունը վերլուծելու նպատակով: Այցելության համար ծանուցումը պետք է ներկայացվի առնվազն 20 (քսան) օր առաջ:

Ֆոդված 10

Այցելություններ

1. Կողմերից մեկի պետության քաղաքացիների այն այցելությունները մյուս Կողմի պետություն, որոնք կնեղատեն Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու բուլլետյուն, ենթակա են կտրցնկալող պետության Անվտանգության իրավասու մարմնի կողմից նախապես տրված գրավոր հաստատման:

2. Այցելությունները, որոնք կներառեն Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու բույրավորություն, Կողմի պետության կողմից կբույրատրվեն մյուս Կողմի պետության այցելություններից միայն այն դեպքում, եթե նրանք ունեն Անճնակազմի գաղտնի աշխատանքի համապատասխան բույրավորություն և լիազորված են ստանալու կամ օգտվելու Գաղտնի տեղեկատվությունից՝ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան:

3. Այցելությունները, որոնք կներառեն երրորդ պետության քաղաքացիների կողմից Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու բույրավորություն, կբույրատրվեն միայն Կողմերի պետությունների միջև ընդհանուր համաձայնությամբ իրենց Անվտանգության իրավասու մարմինների միջոցով:

4. Հյուրընկալող պետության Անվտանգության իրավասու մարմինը Անվտանգության մյուս իրավասու մարմնից պետք է ստանա այցելության հարցում՝ առնվազն 20 (քսան) օր առաջ:

5. Հրատապ դեպքերում, այցելության հարցումը պետք է փոխանցվի առնվազն 7 (յոթ) օր առաջ:

6. Այցելության հարցումը պետք է ներառի.

ա) այցելուի անունը և ազգանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, օրն ու վայրը, ազգությունը, անճնագրի կամ անճը հաստատող փաստաթղթի համարը,

բ) այցելուի կողմից ներկայացվող իրավաբանական անձի անվանումը,

գ) այցելող իրավաբանական անձի անվանումն ու հասցեն,

դ) այցելուի՝ Անճնակազմի գաղտնի աշխատանքի բույրավորությունը և դրա վավերականության հաստատումը,

ե) այցելության հիմքը և նպատակը,

զ) հարցվող այցելության նախատեսվող ժամկետը և տևողությունը: Պարբերական այցելությունների դեպքում կնշվի այցելությունների ընդհանուր տևողությունը,

է) Անվտանգության իրավասու մարմնի պաշտոնական դրոշմակնիքը, ստորագրությունը և ամսաթիվը:

7. Այցելության հարցման հաստատումից հետո, հյուրընկալող պետության Անվտանգության իրավասու մարմինը կտրամադրի այցելության հարցման պատճենը այցելող իրավաբանական անձի անվտանգության աշխատակիցներին:

8. Այցելության հաստատման վավերականությունը չպետք է գերազանցի մեկ տարին:

9. Կողմերի պետությունների Անվտանգության իրավասու մարմինները կարող են կազմել այն անհատների ցուցակը, որոնք լիազորված են իրականացնելու պարբերական այցելություններ: Ցուցակները վավեր են 12 (տասներկու) ամիս ժամանակահատվածով: Համապատասխան այցելությունների պայմանները այս անձանց կողմից ուղղակիորեն կհամաձայնեցվեն այցելվող իրավաբանական անձի համապատասխան

կոնտակտային անձանց հետ՝ նախապես համաձայնեցված ժամկետներին և սպառնա-
ճերին համապատասխան:

Հոդված 11

Անվտանգության խախտում

1. Անվտանգության խախտման դեպքում, որն առաջանում է Ստացող կողմի պե-
տության տարածքում և փաստացի կամ ենթադրյալ փոսնոց է գաղտնի տեղեկատվու-
թյան համար, Ստացող կողմի Անվտանգության իրավասու մարմինը անհապաղ կտեղե-
կացնի Տրամադրող կողմի Անվտանգության իրավասու մարմնին և իր ազգային օրենս-
դրության համաձայն կնախաձեռնի համապատասխան հետաքննություն:

2. Եթե անվտանգության խախտումն առաջանում է երրորդ կողմում, ապա Տրա-
մադրող կողմի Անվտանգության իրավասու մարմինը կձեռնարկի սույն հոդվածի 1-ին
կետում նախատեսված գործողությունները:

3. Մյուս կողմի Անվտանգության իրավասու մարմինը, հարցման դեպքում, կհամա-
գործակցի հետաքննության հարցում ու կտեղեկացվի հետաքննության արդյունքների
վերաբերյալ և կուսման պատճառված վնասի և ծախսերի վերաբերյալ վերջնական
տեղեկատվության անցվերեն բարգձմանությունը:

Հոդված 12

Ծախսեր

Յուրաքանչյուր կողմ կկրի սույն Համաձայնագրի կիրառման և վերահսկման սե-
փական ծախսերը:

Հոդված 13

Վեճերի կարգավորում

Սույն Համաձայնագրի մեկնարամման կամ կիրառման հետ կապված ցանկացած
վեճ կլուծվի կողմերի միջև՝ իրենց Անվտանգության իրավասու մարմինների միջև բա-
նակցությունների միջոցով:

Հոդված 14

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով և ուժի մեջ է մտնում

Կողմերի պետությունների՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ մերպետական ընթացակարգերը կատարելու մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի վերջին գրավոր ծանուցումն առանալու օրվանից հետո երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Սույն Համաձայնագրում ցանկացած ժամանակ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Դրանք կձևակերպվեն առանձին փաստաթղթով և ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:

3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին այդ մասին գրավոր ծանուցելուց հետո: Այդ դեպքում, Համաձայնագիրը կդադարեցվի այդ մասին մյուս Կողմից համապատասխան ծանուցումը ստանալուց 6 (վեց) ամիս անց:

4. Անկախ Համաձայնագրի դադարեցումից, Կողմերը երաշխավորում են, որ կշարունակեն ապահովել ամբողջ Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը, քանի դեռ Տրանսպարտը կողմը Ստացող կողմին չի ազատել այդ պարտականությունից:

Կատարված է Քրատիսլավայում 2014թ. մոյեմբերի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ սլովակերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանության տարաձայնությունների դեպքում, կգերակայի անգլերեն տեքստը:

Համապայմանագիրն ուժի մեջ է մտել 2015թ. սեպտեմբերի 1-ին